գամով սրբել Հայաստանը հին նախապաշարմունքներից կարող չէր, մինչեւ ժամանակը եւ կրթութիւնը չտար նրան մի նոր ձեւ եւ կերպարանք:

Մենք ման էինք գալիս ուխտաւորների բանակի մէջ, ուր իւրաքանչիւր քայլում հանդիսանում էր մի նոր տեսարան: Մարօն լուռ էր. նա խիստ սակաւ էր խօսում: Նա վազում էր մի տեսարանից միւսը՝ որպէս անհանգիստ թիթեռնիկը թռչում է մի ծաղկից դէպի միւսը: Կարծես նրա հետաքրքրութիւնը ոչ մի բանի մէջ չէր կարողանում բաւականութիւն գտնել. նա բոլորից էլ շուտով ձանձրանում էր:

Մի տեղ՝ աշուղը սազը ձեռին հանդէս է մտել. նա իր նոագարանը սեղմած կուրծքին, ածում է, երգում է եւ պատմում է մի հին վէպ: Հեքիաթ սիրող բազմութիւնը, շրջապատած նրան, խորին ուշադրութեամբ լսում է եւ քաջալերում է իր գովեստներով եւ ընծաներով ժողովրդական վիպասանին:

Մի տեղ հանդէս են մտել երկու աշուղներ: Նրանք մրցութիւն են անում միմեանց հետ: Որպէս մի զոյգ համարձակ մենամարտողներ, տաքացած, բորբոքուած կռւում են: Դա հանճարի եւ մտաւոր ճարտարութեան կռիւ է: Նրանցից մէկը երգով առաջարկում է մի հարց, միւսը պէտք է իսկոյն պատասխանէ նոյնպէս երգով: Երկուսի երգեցողութեան յանգերը չափերը եւ եղանակը պէտք է միաձեւ լինեն: Հարցը եւ պատասխանը կատարւում է զարմանալի արագութեամբ, յանպատրաստից: Նա յաղթած է համարւում, երբ պատասխանում է անճիշտ կամ խիստ անագան: Յաղթողը խլում է իր հակառակորդի սազը, մուզաների նրան պարգեւած քնարը — դա բանաստեղծի մրցանակն է:

Ես յետոյ շատ անգամ մտածում էի, երբ մինչեւ այսօր վանքերի տօնախմբութիւնների ժամանակ յայտնւում են աշուղները, որպէս ժողովրդական բանաստեղծներ, ցոյց տալու իրանց հանճարը եւ մրցանակ ստանալու, — չէ՞ որ դա միեւնոյն հին սովորութիւնն է, որ մնացել է կռապաշտական դարերից, երբ մեր երգիչները յայտնւում էին մեհենական տօներում: Բայց որտե՞ղ մնացին նրանց ստեղծագործութեան պտուղները:

Մի այլ տեղ սազանդարներն ածում են զուռնայ եւ նաղարայ: Նրանք կանգնած են տափարակի վրայ: Այնտեղ հաւաքուել է զարճասէր բազմութիւնը: Պար են բռնել. դա կոչւում է եալլի կամ գոանդ: Տղամարդիկ, կանայք եւ աղջիկներ, միմեանց ձեռքից բռնած, կազմել են մի բոլորակ շղթայ: Նոագածուները կանգնած են բոլորակի կենտրոնում: Խայտաճամուկ շղթան պտտւում է նրանց շուրջը: Կնիկների երեսները քօղարկած են, իսկ աղջիկներինը բաց են: Մի տղամարդ, գոյնզգոյն թաշկինակը ձեռքում, դրօշակի